ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/08, 16.04.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Ներսես և ընկերներ» ՍՊԸ

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցում, Նոր Նորք շրջանի վարչական շենքի կաթսայատան սարքավորումների ընթացիկ նորոգման աշխատանքներ

Բողոքի պահանջը՝

Չեղյալ համարել գնահատող հանձնաժողովի որոշումը և «Ներսես և ընկերներ» ՍՊԸ-ին ճանաչել մրցույթի հաղթող մասնակից:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

Հայաստանի Հանրապետության Գնումների բողոքարկման խորհրդին

<<Ներսես և ընկերներ>>ՍՊԸ -ի տնօրեն Ներսես Եփրեմյանից
/նույնականացման քարտ 000108316/
Հասցեն 16թաղ. 25շ. բն.68
Հեռախոս 091594035 010346424
nersesepemyan@mail.ru

Երևանի քաղաքապետարան գնումների վարչություն
Ք.Երևան Արգիշտի 1

Երևան քաղաքի Նոր Նորք շրջանի վարչական շենքի կառուցատան սարքավորումների ընթացիկ նորոգման աշխատանքներ
Ծածկագիր <<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/4>>

<<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/4>> մրցույթի կայացման արդյունքում հաղթող է ճանաչվել <<Ներսես և ընկերներ>>ՍՊԸ. Ըստ ՀՀ Կառավարությանն առնթեր ՊԵԿ-ի հարկային տեսչությունից ստացված տեղեկանքի նշված ընկերությունը վերահսկվող եկամուտների գծով ունի 4000/չորս հազար/ ՀՀ դրամի դրոշմանիշային վճարի պարտք,որի պատճառով գնահատող հանձնաժողովը մերժել է <<Ներսես և ընկերներ>>ՍՊԸ-ն կողմից ներկայացված հայտը: Եթե ՀՀ Կառավարությանն առնթեր ՊԵԿ-ի հարկային տեսչությունը վերահսկում է դրոշմանիշային վճարները/ինչպես ԱԱՀ, շահութահարկը,եկամտահարկը/ ուրեմն հարկային տեսչությունը պարտավոր էր ընկերության միասնական հաշվում 22.03.2019թ.դրությամբ առկա 585220/հինգ հարյուր ութսունհինգ հազար երկու հարյուր քսան/ ՀՀ դրամից հաշվանցել 4000/չորս հազար/ դրամ պարտքը, այսպիսով խախտվել է գնումների մասին օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը:
Խնդրում եմ Ձեր լիազորության սահմաններում գնահատող հանձնաժողովի որոշումը չեղյալ համարել և <<Ներսես և ընկերներ>> ՍՊԸ-ին Ճանաչել մրցույթի հաղթող:

<<Ներսես և ընկերներ>>ՍՊԸ -ի տնօրեն Ն. Եփրեմյան

08.04.2019թ.

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏՔ N 15221
08.04.2019թ.